

Պօղոսի Սամանձեան՝ նաև մեր գնալոց էր ի Թե-
սաղոնիկէ, բայց եհան զմեզ ի պօխճայ ատա, որ (է)
Թէնօտօ ընդդէմ թարթանէլոյ: Արդ մինչ նա-
ւական ելանէաք ի ցամաքն վերոյիշեալ Հօր Պօ-
ղոսի զգեցեալ աստուածածնի հանդերձն ելեալ ի
ծոցոյ իւրմէ երեւիւր, եւ ահա ոմն որ կայր ի ծո-
վեզըն ասէ ցնա զիւր զաստուածածնի հանդերձն
ի ծոցդ. եւ այսպէս ճանաչեցաք զնա զօլ ուղղա-
փառ. եւ ինքն էր վրացի քահանայ անուն Տէր
Վարրիէլ: Եւ յետ սիրալրական ողջունի սկսաւ
պատմել թէ || ընկեր լեալ եմ երկու ստամպոյցի
անձանց՝ վենետիկի նաւով (եւ աստ հանդիպեցաւ
նաև մեր վասն գնելոյ զկարեւոր պէտս) որք
յղեցեալ են ի Կ. Պօլսէ ի ձեռնադրիլ քահանայ.
եւ սքա գնացեալ ձեռնադրեցեալք են քահանայ
յուսմմէ Աբէլ վարդապետէ, եւ ապա գնացեալ
են ի հէճին առ Յօհաննէս Աթղան. սրսոյ զոր ի
նմին ժամանակի իջուցեալ էին յաթուոյն, եւ ի
տեղի նորա նստուցեալ էին Ղուկաս Աթղան. ի
զարմէ աջպահիցն սոյ, եւ ի սմանէ ձեռնադրե-
ցեալք են եպիսկոպոս. Աթանաս եպիսկոպոսն ի
վերայ Հռօմիլայի, եւ մեսրօպ եպիսկոպոսն ի վերայ
տարսոնի: Եւ յորժամ դարձան գալ ի ստամպօլ
հասին ի ուսկուտառ, եւ անդ է եղեալ պօրօքօն
եպիսկոպոսն ի նուիրակութիւն սրբոյ Եղմի. եւ
յետ սիրալրական ողջունի ընդ միմեանց հարցեալ
է ցնոսա պօխճօնն եպիսկոպոսն թէ ուստի՞ գայք.
եւ նոքա պատմեալ են նմա ուստի գան, զինչ
արարին, եւ յուսմէ ձեռնադրեցան քահանայ, եւ
յուսմէ եպիսկոպոս: Յայնժամ Պրօխօրօն եպիսկո-
պոսն ասացեալ է նոցա թէ աբէլ վարդապետն ոչ
է եպիսկոպոս, այլ լոկ քահանայ, եւ դուք այժմ
ոչ էք քահանայ, եկայք լուարուք ինձ, զի ես
ձեռնադրեցից զձեզ գոնեայ քահանայ, զի լիցի
բանն ի վերայ հիման, եւ օրինաւոր. իսկ նոքա ոչ
են հաւանեալ բանից նորա եւ անցին ի ստամպօլ: